

ԵՐԿԱԲՆԱԿՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄԸ ՄԵՋ

Հարց. Ինչո՞ւ չէք ասում, թե Զրիստոս երկու բնութիւն ունի:

Ուղղափառների պատասխանը. Որպէսզի Զրիստոսի մէջ երկու անձերը չգատորոշուեն. քանզի եթէ երկու բնութիւնների բաժանենք, իհարկէ, երկու անձերի կը բաժանուի:

Հակառակորդն ասում է. Մարդն ինչո՞ւ է երկու բնութիւն եւ մէկ անձ:

Ուղղափառն ասում է. Մարդն երկու բնութիւն չէ, այլ մի բնութիւն եւ մի անձ:

Հակառակորդն ասում է. Երկուսից ո՞րն ես ուրանում եւ մի բնութիւն ասում:

Ուղղափառն ասում է. Ոչ թէ ուրանալով եւ զանցառելով, այլ՝ միաւորութեամբ մէկ բնութիւն ընդունելով:

Հակառակորդն ասում է. Բնութեամբ ես ասում միաւորուած, թե՛ անձով:

Ուղղափառն ասում է. Բնութեամբ միաւորեալ եւ մէկ անձ կատարեալ:

Հակառակորդն ասում է. Ինչպէ՛ս ես ասում:

Ուղղափառն ասում է. Զրիստոսի միաւորութիւնն ունի սկիզբ, միջնամաս եւ աւարտ: Սկիզբը երկու բնութիւններն են, միջնամասը՝ միաւորութիւնը մէկ բնութեամբ, իսկ եզրն ու աւարտը՝ մէկ անձը:

Հակառակորդն ասում է. Ապա ինչո՞ւ ես ասում մէկ անձ եւ երկու բնութիւն:

Ուղղափառն ասում է. Զանգի միաւորուածը չի երկատուում. որովհետեւ երկուսութիւն ասելը կամ հասկանալը Զրիստոսի երկատութիւնն ու բաժանումն է:

Հակառակորդն ասում է. Բանի անձը մարդկային անձ ստացաւ, թե՛ բնութիւն:

Ուղղափառն ասում է. Աստուծոյ Բանն իր կատարելութեամբ մարդկային բնութիւն, հոգի, մարմին եւ միտք առաւ, եւ միաւորուելով իր Աստուածութեանը՝ եղաւ մէկ կատարեալ անձ, մէկ դէմք:

Հակառակորդն ասում է. Ապա ինչո՞ւ չէք ասում անձով միացած:

Ուղղափառն ասում է. Զանգի անձ առանց բնութեան միայն անուն է եւ ոչ էութիւն: Եւ դարձեալ՝ անձի միութեանը հետեւում է բաժանումը, եւ բնութիւնն անբաժանելի է մնում: Երրորդ՝ եթէ միայն անձով միանայ եւ ոչ բնութեամբ, ապա Զրիստոսն անձով եւ միայն անունով է Աստուծոյ Որդի եւ ոչ բնութեամբ: Չորրորդ՝ ամէն առարկայ միաւորում է իր բնութեանը եւ ոչ բնութիւնից դուրս, ինչպէս կրակը՝ երկաթի եւ հոգին՝ մարմնի հետ միաւորում է բնութեամբ:

Հակառակորդն ասում է. Եթէ բնութեամբ միացան, ապա բնութիւնների տարբերութիւնները վերացան:

Ուղղափառն ասում է. Թէպէտ բնութեամբ միաւորում է, սակայն տարբերութիւնը չի վերանում. քանզի տարբերութիւնների մնալը չի խափանում միաւորութեանը, ինչպէս հոգու եւ մարմնի, ոսկու եւ կրակի պարագային: Եւ իմացիր, որ տարբերութիւնը երկուսն են՝ բաղկացական եւ բաժանական: Բաղկացական տարբերութիւնն այն է. որտեղից տեսակն է գոյանում, ինչպէս բանական եւ մահկանացու լինելը ամբողջացնում են մարդու բնութիւնը: Իսկ բաժանականն այն է. երբ բաժանում են բանականն ու անբանը՝ մարդը եւ ձին: Արդ՝ դուք, որ Զրիստոսի համար ասում էք, թէ երկու բնութիւն ունի, բաժանական տարբերութիւն էք ասում, իսկ մենք բաղկացական միաւորութիւնն ենք խոստովանում:

Հակառակորդն ասում է. Աստուծոյ եւ մարդու համար ինչպէ՛ս էք ասում մէկ կամք եւ մէկ գործ:

Ուղղափառն ասում է. Ինչպէս մարդու բնութիւնն, ասում ենք, միաւորուած է Աստուծոյ էութեան հետ, այդպէս էլ մարդացածը միաւորեալ մէկ կամք ունի, եւ գործերը կամքին են հետեւում: Ապա ուրեմն, մէկ է ներգործութիւնը՝ մէկ կամքից, մէկ Զրիստոսից առաջ եկած եւ կատարուած: Ինչպէս սուրբ Դիոնէսիոսն է ասում. "Ոչ թէ ըստ Աստուծոյ աստուածային բաներ է կատարում եւ ոչ էլ ըստ մարդու՝ մարդկային բաներ, այլ՝ մեր մէջ կենցաղավարած Աստուծոյ մի նոր աստուածամարդկային ներգործութիւն": Այդպէս ասում է նաեւ Աստուածաբանը Կղոզիանոսին յղած երկրորդ ճառում:

Ո՞ւր են այն ուրացողները, որոնք բացայայտօրէն երկուսի են բաժանում Զրիստոսի կամքը եւ գործը: Զաղցելը եւ ծարաւելը մարդուն են վերագրում, իսկ

բարձրագույն բաները աստուածութեանը: Եւ դարձեալ հարցրեցին մէկ գործի ներգործութեան որպիսութիւնը, ոչ այն բանի պատճառով ենք ասում մէկ ներգործութիւն, որ չկայ բարձր եւ ցածր ներգործութիւն, այլ մէկ ենք ասում ներգործութիւնը, քանզի միութիւնից է ներգործուած, ինչպէս նոյն ձեռքն է եւ կտրում, եւ կարում, եւ գրում, եւ ջնջում: Նաեւ այս իմացիր, որ Զրիստոսի համար մի բնութիւն ենք ասում աւարտման պատճառով եւ ոչ սկզբի, եւ մի գործ (ներգործութիւն) ենք ասում սկզբի եւ ոչ թէ գործի (ներգործութեան) աւարտման պատճառով: Իսկ կամքն ընկալում եւ իբրեւ մէկ իրականութիւն՝ կամեցաւու եւ միաւորուելու պատճառով, որ սկիզբն ու աւարտն է: Եւ այսպէս ասում ենք, մարդացած Բանն ունի մի բնութիւն, մի կամք, մի ներգործութիւն եւ մի կիրք: Ինչպէս քնարն ու քնարահարը մէկ ներգործութիւն են կատարում եւ ոչ երկու, գրիչն ու գրիչ շարժողը մէկ ներգործութիւն են կատարում եւ ոչ երկու, ձայնն ու խօսքը մէկ ներգործութիւն են կատարում եւ ոչ երկու, ինչպէս հոգին եւ մարմինը մէկ ներգործութիւն են կատարում եւ ոչ երկու, հոգին եւ մարմինը մէկ ներգործութեան զարկացած մարդը մէկ է եւ մէկ է մարդու ներգործութիւնը, այդպէս էլ Բանն Աստուած իր մարմնով կատարում էր մէկ ներգործութիւն, քանզի բնութիւնների միաւորութիւնն առանց փոփոխման եւ բաժանման է: Այսքանն այս մասին:

Դարձեալ հարցումներ երկաթնակներից, ովքեր ուրանում են մէկ Զրիստոսին մարդացած Աստուած ասել, այլ բաժանելով կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ են ասում:

Առաջին հարցում. "կատարեալ"-ն անձի՞ համար էք ասում, թէ՞ բնութեան: Քանզի եթէ բնութեան համար էք ասում. Երրորդութեան մէջ երկու կատարելութիւն էք ներմուծում, որովհետեւ Երրորդութիւնը չորրորդութիւն դարձրիք, ինչպէս ասուեց:

Երկրորդ հարցում. կոյս Մարիամը Միածին Որդուն ծնեց իբրեւ այդպիսի՞ն, թէ՞ իբրեւ անդրանիկ որդի, թէ՞ երկուսը միաժամանակ. եթէ երկուսը միաժամանակ, ահա երկու որդու մայր անուանեցիք, իսկ եթէ իբրեւ անդրանիկ, ահա, ըստ Նեստորի, կուսածին որդուն Աստուած չանուանեցիք, եւ եթէ սոսկ իբրեւ Բան, գոյութեան սկիզբը մօրից լինելն էք ասում եւ ոչ՝ Հայր Աստծուց:

Երրորդ. առաքեալն ասում է. "Ամեն ծունկ Նրան պիտի խոնարհուի" (Փիլիպ. Բ 9): Արդ, ո՞վ բաժանողներ, Զրիստոսի մէջ ո՞ր բնութիւնն է երկրպագելի, քանզի եթէ Աստուածութեանը հրէաբար երկրպագես, ուրեմն առաքեալը ստում է. որովհետեւ Յիսուս Զրիստոսին է ասում. իսկ եթէ միայն մարդկութեանը՝ մարդապաշտ հայրոյութեան մէջ ընկար. եւ Արարչի փոխարէն՝ ընդդէմ աստուածային օրէնքների, արարածին երկրպագեցիր:

Չորրորդ. "Մեզ համար մէկ է Հայր Աստուած եւ մէկ Տէր Յիսուս Զրիստոս" (Ա Կոր. Ը 6) ասում է: Ով դու երկաթնակ, ո՞ր բնութիւնն ես ասում Զրիստոսի մէջ մէկ Տէր, Աստծո՞ւնը, թէ՞ մարդունը, քանզի եթէ միայն Աստծունը Արիոսի /հերձուածի/ մէջ ընկար: Քանզի Զրիստոսին սոսկ Բան անուանեցիր, այսինքնըն Հօրից օծուած, որից իմացում է Հօրից պակաս լինելը, իսկ եթէ միայն մարդուն ես ասում, Բանին զրկեցիր Տէրութիւնից: Եւ եթէ ամենայն ինչի լինելը սոսկ մարդով ես ասում, չափազանց չար է: Իսկ եթէ երկու բնութիւններն եւ Տէր անուանում, առաքեալի դէմ ես խօսում, որ ասում է՝ Տէր Յիսուս Զրիստոս մէկ է, ինչպէս եւ Հայրը:

Հինգերորդ. "Դու ես Զրիստոսը՝ /Կենդանի/ Աստուծոյ Որդին" (Մատթ. ԺԶ 16), ասում է. քեզ եմ հարցնում, ո՞վ դու Զրիստոսին բաժանող, Աստուծոյ Որդուն ի՞նչ բնութեամբ ես ասում, քանզի եթէ բնութեամբ Աստուածութիւն ես ասում, ապա մարդկութիւնը համարում ես շնորհքով եկած: Իսկ եթէ մարդկութիւնն ես բնութեամբ Որդի անուանում, ահա սրանով էլ Բանը զրկում ես որդիութիւնից: Իսկ եթէ երկուսն էլ, ահա սրանով Հօր համար երկու բնութեան Որդի լինելն ասացիր:

Վեցերորդ. մկրտուեցինք Հօր, Որդու եւ Ս. Հոգու անուանով: Արդ հաւատալով մկրտում ես ինչպէս Հօր եւ Ս. Հոգու, այնպէս էլ մարմնացած Որդու, որպէս մէկ Տիրոջ եւ մէկ Զրիստոսի: Հարցնում եմ Զրիստոսին բաժանողիդ ո՞ր բնութեանն ես մկրտում՝ Աստուծո՞ւն, թէ՞ մարդու: Քանզի եթէ միայն Աստուծոյ, ապա անմահ բնութեանը մահուան ենթակայ ես դարձնում, որովհետեւ առա-

քեալն ասում է. «Քրիստոսով մկրտուածներս՝ Նրա մահուամբ մկրտուեցինք թաղուելով նրա մէջ» (Հռոմ. Զ 3): Իսկ եթէ միայն մարդու բնութեանը, ուրեմն դեռ անկատար ես, քանզի սոսկ մարդով մկրտուեցիր, նաեւ քանզի Բանը հանեցիր Երրորդութեան կարգից մարդուն շարադասելով Նրա տեղը: Ուստի մկրտում ենք Հօր, Որդու եւ Ս. Հոգու անունով:

Եօթներորդ. «Ինչպէս Հայրն է կենդանի, այնպէս էլ ես եմ կենդանի Հօր համար» (Յովհ. Զ 58) եւ «Ովքեր ուտեն Ինձ. նրանք կը բնակուեն Իմ մէջ եւ ես՝ նրանց մէջ» (Յովհ. Զ 57): Հարց տալու է երկուսի բաժանողներին. ո՞ր բնութիւնն ես ուտում, որով կենդանանում ես, քանզի եթէ Աստծունը, ուտելի չէ Բանի էութիւնը, իսկ եթէ սոսկ մարդունը, ինչպէ՞ս կարող է մարդու մարմինը կենդանարար լինել կամ ինչպէ՞ս նա առաքուեց Հօրից, ինչպէ՞ս է, որ կենդանի է Հօր համար:

Ութերորդ. «Հայր, փառաւորիք Ինձ Քո փառքով, որ աշխարհի լինելուց առաջ ունէի Քեզ մօտ» (Յովհ. ԺԷ 5): Ասա, ո՞վ դու բաժանող, ո՞ր բնութիւնն է ասում Քրիստոսի մէջ. եթէ Աստծունն ես ասում, ցոյց ես տալիս Բանի փառքի կարօտ լինելը, եւ քեզ հարկ է Արիոսին հետեւել: Իսկ եթէ լոկ մարդկայինը՝ ինչպէ՞ս փառք ունէր աշխարհի լինելուց առաջ: Եւ քանզի Ինքը ժամանակի մէջ եղաւ. ուրեմն ստեց, եւ Աստծուն Իր Հայրն անուանեց՝ ասելով որ Դաւթի գաւակից է:

Իններորդ. «Նստեց Բարձունքում Մեծութեան աջ կողմում» (Մտթ. ԻԶ 64, Մրկ. ԺԴ 62): Այս ասա նմանապէս. Մեծութեան աջ կողմում նստածը Որդի էր բնութեամբ, թէ՞ ըստ քեզ. որդիացած շնորհով: Քանզի եթէ բնութեամբ է, ուրեմն ստեց առաքեալը եւ Աւետարանը, որ ասում է՝ Քրիստոս յարութիւն առաւ եւ համբարձուեց եւ նստեց Հօր աջ կողմը (Մրկ. ԺԶ 20): Իսկ եթէ մարդը նստեց, ահա Բանին զրկեցիր Հօր աթոռակցութիւնից, ո՞վ դու բաժանութեան սիրահար. իսկ եթէ երկու բնութիւններն ես ասում, ահա երկուսի Հօր աթոռակից լինելը ասացիր. մէկն՝ Աստուած եւ միւրը մարդ:

Տասներորդ. «Իշխանութիւն ունեմ իմ անձը դնել եւ վերցնել» (Յովհ. Ժ 18): Ասա, ով երկատող. ո՞ւմ ես վերագրում ասուածը. քանզի եթէ միայն Բանին, ահա անմահին մահուան ենթակայ դարձրիր, իսկ եթէ միայն մարդուն՝ ապա ինչպէ՞ս կարող է լոկ իր ցանկութեամբ մեռնել եւ իր գօրութեամբ յարութիւն առնել:

Այս տաւր հարցումները երկաբնակ դաւանողների դէմ են, ովքեր մէկ Քրիստոսին երկու բնութիւնների են բաժանում:

Դարձեալ՝ կան եւ այնպիսիք, ովքեր ցնորամտութեամբ հակառակուելով ասում են թէ նրանք, որ Քրիստոսի մէջ երկու բնութիւն են դաւանում. ո՞րն են ցանկանում խոստովանել՝ մշտնջենաւոր աստուածայի՞նը, թէ՞ երկուանը, որ Կոյսից էր: Չեն գնում իրենք իրենց, քանզի բաժանում են բնութիւնները եւ երկու ներգործութիւն, կամք եւ մի դէմք են դաւանում երկու անջատուածների մէջ: Արդ՝ արդեօք ո՞ւմ են յարադրում Քրիստոսի մէկ դէմքը. Հօրից ծնուած անեղական իսկութեանը, թէ՞ Կոյսից ծնուած ժամանակաւորին: Գիտեմ, որ այս մասին բազում տարակոյսներ ունեն, որովհետեւ իմանում են, որ դէմքի ենթակայ լինելը անկարելի է առանց տեսակի: Նաեւ ասում ենք՝ մարմնացած Բանը մէկ բնութիւն ունի. ոչ թէ ըստ պարզութեան եւ ոչ ըստ շփոթ հեղումի. այլ ըստ միաւորութեան:

Թարգմանութիւնը՝ ՅԱԿՈԲ ԶԷՕՍԷԵԱՆԻ
Հատուած «Ոսկեփորիկ» գրքից